Ազգ
Azg
26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 ՇԱԲԱԹ 184(5267)
ISSN: 1829-1651

# Աշխարհի 35 ղեկավարների հեռախոսները գաղտնալսվել են ԱԱԳ-ում

## *Վերահսկվել են մասնավորապես Իտալիայի կառավարությունը եւ քաղաքացիները*

**ԱՄՆ-ի Ազգային անվտանգության գործակալությունը (ԱԱԳ) վերջին 6-7 տարիներին գաղտնալսել է աշխարհի 35 ղեկավարների հեռախոսազրույցները: Այդ մասին հաղորդում է բրիտանական «Գարդիան» թերթը՝ վկայակոչելով ԱԱԳ եւ ԿՀՎ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենից ստացված գաղտնի փաստաթղթերը:**

**Ժամանակին աշխարհի 35 ղեկավարների հեռախոսահամարները 200 համարների ցանկում ԱԱԳ-ին էր փոխանցել ամերիկացի բարձրաստիճան մի պաշտոնյա: Այդ հեռախոսներն անմիջապես ենթարկվել էին գաղտնալսման, նշում է թերթը: Լրտեսության թիրախ դարձած պետությունների ղեկավարների անունները առայժմ չեն բացահայտվում, սակայն թերթում նմանօրինակ տվյալների հրապարակումը արդեն իսկ կարող է անուղղելի վնաս պատճառել ԱՄՆ-ի արտաքին քաղաքական շահերին:**

**«Գարդիանի» տրամադրության տակ հայտնված ծառայողական գրությունը թվագրված է 2006 թվականով: Փաստաթղթում ասվում է, որ ԱԱԳ-ի «հաճախորդները» (այսինքն՝ Սպիտակ տունը, պետդեպարտամենտը, Պենտագոնը եւ ամերիկյան մյուս պետհիմնարկները) պարտավոր են իրենց շփումների ցանկերը փոխանցել գործակալության ռադիոհետախուզության վարչությանը (Signals Intelligence Directorate, SID): 200 հեռախոսահամարների փոխանցման դեպքը փաստաթղթում բերվում է որպես նման համագործակցության հաջող օրինակ: «Գարդիանը» հաղորդում է, որ փաստաթղթի հեղինակները միեւնույն ժամանակ խոստովանում են այդ ցանկի հետ աշխատելիս ստացված տվյալների համեմատաբար փոքր արժեքը:**

**ԱԱԳ-ի կամ ԱՄՆ-ի կառավարության ներկայացուցիչներն առայժմ պաշտոնապես չեն արձագանքել բրիտանական թերթի հրապարակմանը:**

**Ավելի վաղ՝ հոկտեմբերի 24-ին, Բեռլինում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Էմերսոնը Գերմանիայի ԱԳՆ էր կանչվել ամերիկյան հատուկ ծառայությունների կողմից կանցլեր Անգելա Մերկելի բջջային հեռախոսի գաղտնալսման կապակցությամբ:**

**Իտալական լրատվամիջոցների վերջին հաղորդումների համաձայն, ամերիկյան ԱԱԳ-ն եւ Կառավարական կապի բրիտանական կենտրոնը (GCHQ) միացյալ ուժերով հետեւել են Իտալիայի կառավարության եւ ռազմական գերատեսչությունների ներքին հեռախոսակապին, ինչպես նաեւ գաղտնալսել են Իտալիայի շարքային քաղաքացիների հեռախոսազրույցները: Ավելի վաղ Le Monde թերթը գրել էր Ֆրանսիայի քաղաքացիների զանգվածային լրտեսման մասին:**

**Պ. Ք.**



# Սպիտակ տունը մերժում է հանրային ցուցադրության տրամադրել հայ որբերի հյուսած պատմական գորգը

Ցեղասպանությունից վերապրած հայ որբերի ձեռքերով հյուսված եւ 1925 թվականին որպես երախտագիտության արտահայտություն Մ. Նահանգների նախագահ Կալվին Կուլիջին նվիրված պատմական գորգը չի ցուցադրվելու առաջիկա դեկտեմբերի 16-ին Սմիթսոնյան ինստիտուտի կազմակերպած մշտական ցուցահանդեսում: Սպիտակ տունը մերժել է իր տրամադրության տակ գտնվող պատմական գորգը տրամադրել ինստիտուտին՝ առայժմ մեզ անծանոթ, բայց ենթադրելի պատճառներով: Այս մասին երեկ ահազանգ էր հնչեցրել ՀՅԴ Հայ դատի գրասենյակը (ANCA), որ այդ մերժման մասին տեղեկացել է հեղինակավոր «Վաշինգտոն փոստ» թերթից, եւ կոչ է արել ամերիկահայությանը՝ բողոքի նամակներ հղել Սպիտակ տան եւ Կոնգրեսի հասցեներով: Հիշյալ թերթի աշխատակազմից՝ Պուլիցերյան մրցանակի դափնեկիր, լրագրող Ֆիլիպ Քենիկտոնը տեղեկացրել է, որ հայ որբերի հյուսած գորգն արդեն շուրջ 20 տարի գտնվում է Սպիտակ տան պահեստներում, եւ անհայտ պատճառներով այժմ մերժվում է այն տրամադրել Սմիթսոնյան թանգարանին, որն այդ կապակցությամբ պատրաստվում էր կազմակերպել նաեւ Հակոբ Մարտին Դերանյանի «Նախագահ Կալվին Կուլիջը եւ հայ որբերի գորգը» գրքի շնորհանդեսը: «Վաշինգտոն փոստը» տեղեկացրել է նաեւ, որ Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնի ջանքերը գորգի հանրային ցուցադրությունը ապահովելու ուղղությամբ՝ նույնպես իզուր են անցել:



***Նախագահ Կուլիջին է հանձնվում հայ որբերի գորգը:***

# 25 տարի անց Շառլ Ազնավուրը ելույթ կունենա Լոնդոնի թագավորական «Ալբերտ» սրահում

Երգահան, շանսոնների լեգենդար կատարող Շառլ Ազնավուրը հոկտեմբերի 25-ին ելույթ կունենա Լոնդոնի թագավորական «Ալբերտ» սրահում: «Արմենպրես»-ին Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակից տեղեկացրին, որ մեծ շանսոնյեի ելույթն առաջինն է Լոնդոնում՝ վերջին 25 տարվա ընթացքում:

Ավելի քան 60 տարվա ստեղծագործական կյանքի ընթացքում Շառլ Ազնավուրը ձայնագրել է 1200 երգ, նկարահանվել է 80 կինոնկարում, թողարկել 294 ալբոմ եւ հազարավոր համերգներ տվել ամբողջ աշխարհում: Երաժիշտը Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանն է Շվեյցարիայում եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ում: Նա հուլիսի սկզբին իր ներկայությամբ պատվեց «Ոսկե ծիրան» Երեւանի 10-րդ միջազգային կինոփառատոնի հոբելյանը: Փառատոնի շրջանակում Շառլ Ազնավուրի անունը կրող հրապարակում բացվեց նրա աստղը:

# Աղանդները ոտնահարում են ազգային իրավունքները

Երեկ ասուլիսի ժամանակ Քայքայիչ աղանդներից տուժածների օգնության եւ վերականգնողական կենտրոնի տնօրեն **Ալեքսանդր Ամարյանը** անդրադարձավ մեր հանրապետությունում գործող կրոնական կազմակերպություններին: Նրա դիտարկմամբ՝ եղել են դեպքեր, երբ ոտնահարվել են մեր ազգային իրավունքները: Ըստ նրա՝ Հայաստանում կան հողատարածքներ, որոնք վաճառվել են արտասահմանյան կառույցների՝ ընդհուպ քայքայիչ աղանդ համարվող կազմակերպության:

**Ի. Պ.**

# Կոնֆերանս՝ նվիրված Գյուլիստանի պայմանագրի 200-ամյակին

Հոկտեմբերի 31-ին Մոսկվայի President-Hotel-ում կկայանա «Գյուլիստանի խաղաղ պայմանագիր. պատմություն եւ ժամանակակից իրողություններ» խորագրով կոնֆերանս՝ նվիրված Գյուլիստանի պայմանագրի 200-ամյակին:

Կոնֆերանսում կքննարկվի պայմանագրի դերը քաղաքական այս փուլում եւ դրա ազդեցությունը կովկասյան տարածաշրջանի եւ հատկապես ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում:

Կոնֆերանսում ելույթներ կունենան հայտնի պատմաբաններ եւ քաղաքագետներ Ռուսաստանից եւ Հարավային Կովկասի երկրներից:

**Հ. Հ.**

# Սաակաշվիլու վերջին օրերը... նախագահի ընտրություններ



**Վ. ՊՈՂՈՍՅԱՆ**

Վրաստանը փաստացի կանգնած է մի ողջ ժամանակաշրջանի հրաժեշտ տալու շեմին, ընդ որում՝ հրաժեշտ են տալու երկրի նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն, որ տասը տարի առաջ հայտնվեց քաղաքական դաշտում՝ հեռացնելու խորհրդային դատողությամբ անկախ Վրաստանի ղեկին կանգնած Էդուարդ Շեւարդնաձեին:

Վաղը, հոկտեմբերի 27-ին, Վրաստանում նախագահի ընտրություններ կլինեն, որոնց մասնակցելու ցանկությամբ առաջադրվել էր 23 թեկնածու: Հայաստանի նման, Վրաստանում էլ կան արդեն խրոնիկ թեկնածուի վերածված կուսակցապետներ, որոնք, սակայն, որեւէ լուրջ մրցակցություն չեն ներկայացնում:

Նրանց կողքին այս ընտրություններում կան նաեւ այնպիսիք, որոնց մեջ էլ փաստացի կլինի պայքարը ձայների համար: Ամեն դեպքում, պատվերով ու առանց պատվերի հարցումների արդյունքներով՝ ներկայիս իշխող «Վրացական երազանք» կոալիցիայի անունից թեկնածու Գեորգի Մարգելաշվիլին համարվում է առաջատար, ընդ որում՝ ձայների 50 տոկոսից ավելին ստանալու հեռանկարով:

Վարչապետ Բիձինա Իվանիշվիլու այս թեկնածուին նշանակալիորեն զիջում է Միխեիլ Սաակաշվիլու կուսակցության թեկնածու Դավիթ Բաքրաձեն, որը հավանաբար ստանա ձայների մոտ 10 տոկոսը: 6-7 տոկոս հավաքելու հեռանկար կարող է ունենալ Միխեիլ Սաակաշվիլու նախկին թիմակից, այդուհետեւ Սաակաշվիլուն ընդդիմադիր, հիմա էլ ոչ այնքան ընդդիմադիր Նինո Բուրջանաձեն:

Ամեն դեպքում, կարելի է արդեն իսկ ասել, որ Սաակաշվիլուն ուղարկում են թոշակի, առնվազն այն դիտարկմամբ, որ նախագահի ընտրություններից հետո սահմանադրական փոփոխություններով Վրաստանում նախագահը դառնում է ճիշտ այնպիսի ֆիգուր, ինչպիսին Թուրքիայում է, իսկ վարչապետը, որն արդեն իսկ մեծ լիազորություններ ունի, կստանա ավելին:

*Տես էջ 3*

# Ընթացիկ

## Հայաստանը կարող է դառնալ ոսկերչական կենտրոն

Հայկական ոսկերչությունը միջազգային լայն ճանաչում է ստանում, տարեցտարի ավելանում են «Yerevan show 2013» ոսկերչության միջազգային ցուցահանդեսի մասնակիցների թիվն ու աշխարհագրությունը:

Հոկտեմբերի 28-30, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր: Կայանալիք երրորդ ցուցահանդեսին կներկայացվեն ավելի քան 20 երկրի 100 ընկերության աշխատանքներ: Այս տարի էլ ցուցահանդեսին որպես պատվավոր հյուրեր ներկա կգտնվեն Համաշխարհային ոսկերիչների ասոցիացիայի նախագահ Գայետանո Կավալիերին եւ Malca-Amit Global Limited ընկերության ղեկավար Նայջըլ Փաքմանը:




Այս տարի ցուցահանդեսում կներկայացվի 130 տաղավար: Սա, ըստ Հայ ոսկերիչների համաշխարհային միության փոխնախագահ **Արտակ Ուղումյանի**, հսկայական առաջընթաց է, որովհետեւ նախորդ ցուցահանդեսում ներկայացվել էր ընդամենը 36 ընկերության աշխատանք 48 տաղավարով: Ավելացել է նաեւ հայկական ընկերությունների թիվը. «Հայաստան» տաղավարով այս տարի կներկայացվեն 25 ընկերության աշխատանքներ:

Արտակ Ուղումյանի խոսքերով՝ միությունը հսկայական ջանք է գործադրել, որպեսզի ցուցահանդեսը տեղականից վերածվի տարածաշրջանայինի: Առաջին արգելքը հաղթահարված է, եւ Երեւանում կայանալիք ցուցահանդեսներն արդեն ընդգրկվել են ընդհանուր ոսկերչական ցուցահանդեսների ցանկի մեջ:

«Դա մասին է խոսում այն փաստը, որ խոշոր ընկերությունները, որոնք հաշվառում են ցուցահանդեսները, մարկետինգ են անում, արդեն մտցրել են ցուցահանդեսն իրենց չվացուցակի մեջ: Այս ցուցահանդեսները նպաստում են նաեւ Հայաստանում ոսկեգործության զարգացմանը», վստահեցրեց Ուղումյանը:

Արդյունաբերության զարգացման հիմնադրամի տնօրեն **Հայկ Միրզոյանի** գնահատմամբ՝ Հայաստանը լավ հնարավորություն ունի դառնալու ոսկերչական կենտրոն: Այժմ Հայաստանի ոսկերիչների ասոցիացիան կառավարության հետ քննարկում է ոսկերչության ոլորտում ազատ տնտեսական գոտի ստեղծելու հարցը: Միրզոյանի խոսքերով՝ հոկտեմբերի վերջին կայանալիք ցուցահանդեսը եւս մեկ հարթակ է որպեսզի միջազգային ընկերությունները ծանոթանան առեւտրատնտեսական գոտու հնարավորություններին եւ հետագայում ներդրումներ կատարեն:

Միությունը ցուցահանդեսին մասնակցելու հրավեր է ուղարկել ավելի քան 100 գնորդի: Նրանք Ռուսաստանից, Արաբական Միացյալ Էմիրություններից եւ Բելառուսից առեւտրական կազմակերպությունների ղեկավարներ են, ովքեր կգնեն զարդեր, կկնքեն պայմանագրեր եւ ձեռք կբերեն համագործակցության նոր եզրեր: Ստացվում է, որ երեւանյան ցուցահանդեսը հրաշալի հարթակ է դառնում եւ ապահովում կապ ու շահավետ համագործակցություն ոսկերիչների եւ գնորդների համար:

Ցուցահանդեսի շրջանակներում՝ հոկտեմբերի 29-ին տեղի կունենա նաեւ համաժողով, որտեղ կներկայացվեն զեկույցներ Հայաստանում եւ աշխարհում ոսկեգործության զարգացման խնդիրների վերաբերյալ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հեսսենի երկրամասում նշվեց ՀՀ անկախության տոնը

**ՀՀ անկախության 22-ամյակին նվիրված միջոցառումը Գերմանիայում մի փոքր ուշ է նշվել՝ սեպտեմբերի 22-ին ԳԴՀ զբաղված էր Բունդեսթագի, որոշ երկրամասերում՝ նաեւ տեղական ընտրություններով: Ինչպես իրազեկ ենք դառնում Հեսսենի երկրամասի մարզային «Բյուրշթեդթեր ցայթունգի» հոկտեմբերի 19-ի համարից, Բերգշտրասսե մարզում այն նշվել է հոկտեմբերի 18-ին ՀՀ պատվո հյուպատոս Սթիվեն Բրայան Ֆերայի ջանքերով: «Ազգ»-ում ժամանակին իրազեկել ենք, որ ԳԴՀ-ում ՀՀ-ն այժմ երկրորդ պատվո հյուպատոսն ունի՝ հեփփենհայմցի գործարար դոկտոր Ֆերան 2012-ի հոկտեմբերից Մայնի Ֆրանկֆուրտում ՀՀ պատվո հյուպատոսի պարտականություններն է կատարում: Անկախության տոնի առթիվ կազմակերպված հանդիսությանը պաշտոնապես Հայաստանը ներկայացրել եւ ելույթ է ունեցել է Աժ պատգամավոր Վահան Հովհաննիսյանը, որն իր երկրի քաղաքական շահերը նաեւ եվրոպական խորհրդարանում է պաշտպանում, գրում է թերթը: (Բեռլինում ՀՀ դեսպանի տեղը թափուր է Արմեն Մարտիրոսյանի սեպտեմբերի վերջին Երեւան վերադարձից հետո, ԶԼՄ-ները հաղորդում են այդ պաշտոնում Վահան Հովհաննիսյանի նշանակման մասին - Ան. Հ.): Ըստ գերմանական լրատուի, Հովհաննիսյանն անդրադարձել է իր երկրի հուզիչ պատմությանը, համերգային մասում ելույթ է ունեցել հեփփենհայմցի վիրտուոզ երգեհոնահար Ֆրանց Լամբերթը, իսկ ԳԴՀ-ում Վրաստանի դեսպան Գաբրիելա ֆոն Հաբսբուրգը տոնահանդեսի առթիվ հավաքված հանրությանը Հայաստանի մասին սեփական տպավորություններն է փոխանցել: Տեղական իշխանությունների ներկայացուցիչ Մաթթիաս Վիլկեսը, որ առիթ է ունեցել դոկ. Ֆերայի ընկերակցությամբ լինել Հայաստանում, իր եզրափակիչ խոսքում անդրադարձել է Հայոց ցեղասպանությանը, հատկապես շեշտելով, թե թուրքական իշխանությունները պատասխանը դեռ չեն վերանայել, եւ ինքն իր լիազորությունների սահմաններում սատարելու է Հայաստանին: Գերմանական լրատուն փոխանցում է նաեւ, թե «առաջիկա շաբաթ Հեփփենհայմում սպասվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ Արա Հարությունյանի ելույթը»:**

Ան. Հ.
Գերմանիա

## Նամականիշ՝ նվիրված Անտոն Քոչինյանի 100-ամյակին

**Հոկտեմբերի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար եւ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանի 100-ամյակին նվիրված նամականիշի մարման պաշտոնական արարողությունը:**




**Նամականիշի վրա պատկերված է ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար եւ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանը՝ Երեւան քաղաքի եւ Արարատ լեռան խորապատկերին:**

**Անտոն Երվանդի Քոչինյանը ծնվել է 1913թ. նոյեմբերի 25-ին Լոռու մարզի Վահագնի գյուղում: 1966-74թթ. զբաղեցրել է ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, 1952-1966թթ. եղել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ: Քոչինյանը մեծ ներդրում ունի երկրի տնտեսական եւ մշակութային առաջընթացում: Մահացել է 1990թ. դեկտեմբերի 1-ին:**

**Դիզայներ՝ Դավիթ Դովլաթյան**
**Տպաքանակը՝ 40 000**
**Տպարանը՝ Cartor, Ֆրանսիա**

### ՃԱՆՏԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

## ՎիվաՍել-ՄՏՍ-ը տարեսկզբից 203 նոր բազային կայան է տեղադրել Հայաստանի մարզերում

**Ցանցի ընդարձակման եւ արդիականացման ծրագրի շրջանակում, ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղադրել է բազային հերթական 4 կայանը՝ Շաղափ, Լուսաշող (Արարատի մարզ), Մոզրով եւ Գնիշիկ (Վայոց Ձորի մարզի Գնիշիկ համայնք) գյուղերում:**

**ՎիվաՍել-ՄՏՍ-ը նախկինում էլ Մոզրով, Շաղափ եւ Լուսաշող գյուղերում ծածկույթ էր ապահովում հարակից տարածքում գտնվող բազային կայանների միջոցով: Գյուղերին մոտ տարածքներում նոր կայանների տեղադրումը բնակիչներին արդեն թույլ է տալիս օգտվել երրորդ սերնդի (3G)՝ ավելի բարձր որակի ձայնային եւ ինտերնետ հասանելիության ծառայություններից: Չորրորդ՝ Գնիշիկ գյուղում ՎիվաՍել-ՄՏՍ-ն այս պահին բջջային կապի միակ օպերատորն է, որն առաջարկում է բարձրորակ բջջային 3G ցանց, այդ թվում՝ գերարագ ինտերնետ:**

**Գնիշիկը միակ գյուղը չէ, որտեղ բնակչությանը բջջային հաղորդակցության ծառայությունների լիարժեք փաթեթ առաջարկող միակ օպերատորը ՎիվաՍել-ՄՏՍ-ն է: Հայ-իրանական սահմանին գտնվող Նռնաձոր գյուղում, բարդ լանդշաֆտով լեռնային շրջանում, ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղադրել է բազային ժամանակակից 3 կայան՝ ձայնային եւ ինտերնետ հասանելիության կապ ապահովելով միջազգային տարանցիկ ուղի հանդիսացող հայ-իրանական սահմանին, գյուղին եւ դրա շրջակայքին (2G եւ 3G կայանները տեղադրվել էին համապատասխանաբար 2007 եւ 2010 թվականներին):**

**ՎիվաՍել-ՄՏՍ-ը բջջային կապի միակ օպերատորն է նաեւ Լոռու մարզի մի շարք գյուղերում: Մասնավորապես՝ հայ-վրացական սահմանին գտնվող Ջիլիզայում (2G ցանցը հասանելի է 2007-ից, 3G ցանցը՝ 2011-ից), Ծաղկահովիտում՝ (2G-ին՝ 2009-ից, 3G-ը՝ 2013-ի հունիսից) եւ Հալավարում (2G-ն 2009-ից 3G-ն՝ 2013-ի հունիսից): Բազային կայանների տեղադրումից բացի, ՎիվաՍել-ՄՏՍ-ն այս, ինչպես նաեւ Մոզրովի եւ Նռնաձորի դպրոցներն ապահովել է «ՄՏՍ կոնեկտ սահմանափակ» եւ «Home-Zone Turbo» 3G/Wi-Fi երթուղիչներով գործող բարձր արագության ինտերնետ տրամադրող սակագնային պլաններով: Նմանատիպ ծրագիր է իրականացվել նաեւ Տաթեւ եւ Արտավան գյուղերում: Վերը նշված գյուղերից շատերում չի եղել անգամ բնակչության լայն զանգվածի համար հասանելի ֆիքսված հեռախոսակապ:**

**Բազային կայանների տեղադրման մասին որոշում կայացնելիս ՎիվաՍել-ՄՏՍ-ը չի առաջնորդվում բացառապես ներդրումների վերադարձելիության (Return on Investment) չափանիշներով: Կայանների տեղադրումը եւ շարժական կապի ձայնային ու ինտերնետ հասանելիության ծառայությունների ապահովումը փոքրաթիվ բնակչություն ունեցող հեռավոր, լեռնային եւ սահմանամերձ գյուղերում ՎիվաՍել-ՄՏՍ-ի համար առաջնային խնդիր է, քանի որ կապի ենթակառուցվածքի առկայությունը սոցիալական եւ ռազմավարական հարց է: Որպես պատասխանատու օպերատոր, ՎիվաՍել-ՄՏՍ-ը վճռական է ապահովելու փոքր բնակչություն եւ ծառայությունների սպառման փոքր հեռանկարներ ունեցող ամենահեռավոր շրջանները՝ շարժական կապի ձայնային եւ ինտերնետ հասանելիության ամենանորարարական ծառայություններով:**

**Ցանցի ընդարձակման եւ արդիականացման ծրագրի շրջանակում, ՎիվաՍել-ՄՏՍ-ը ընթացիկ տարվա հունվարից-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում Հայաստանի մարզերում տեղադրել է երրորդ սերնդի 156 նոր 3G (HSPA+) եւ երկրորդ սերնդի (2G) 47 նոր բազային կայան: Ընդհանուր առմամբ երկրով մեկ տեղադրվել է 203 նոր բազային կայան: Ծրագրի շրջանակներում 2G կայանները արդիականացվել են ձայնային ծառայությունների, իսկ 3G կայանները՝ տվյալների փոխանցման հնարավորությունների ընդլայնման եւ թողունակության ավելացման կտրվածքով:**

| Մարզ | 2G | 3G |
|---|---|---|
| Լոռի | 8 | 30 |
| Արագածոտն | 2 | 17 |
| Կոտայք | 9 | 24 |
| Շիրակ | 7 | 26 |
| Գեղարքունիք | 6 | 24 |
| Տավուշ | 5 | 24 |
| Երեւան | 3 | 3 |
| Սյունիք | 3 | 3 |
| Վայոց Ձոր | 2 | 2 |
| Արարատ | 2 | 2 |
| Արմավիր | | 1 |
| **Ընդհանուր** | **47** | **156** |

**Ցանցի արդիականացման, վերազինման եւ ընդլայնման աշխատանքները շարունակվում են: Նախատեսվում է մինչեւ տարեվերջ տեղադրել հավելյալ 119 նոր բազային կայան:**

Ճանաչված ու սիրված լրագրող **Գենոֆիա Մարտիրոսյանի** հոգեհանգիստը կկայանա կիրակի օրը՝ հոկտեմբերի 27-ին՝ ժամը 18:00-ին, Փարաքարի Սուրբ Հարություն եկեղեցում:

Անվանի լրագրողին վերջին հրաժեշտի արարողությունը կկայանա երկուշաբթի օրը՝ հոկտեմբերի 28-ին՝ ժամը 13:00-ին, նույն եկեղեցում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

ԱԶԳ

## Անցուդարձ

# Հայ-ֆրանսիական գործարար համաժողով Երեւանում



Էկոնոմիկայի նախարարությունում երեկ տեղի ունեցավ ֆրանսահայ գործարարների եւ ներդնողների համաժողովը, որին մասնակցում էին 40 ֆրանսահայ եւ 50 հայաստանյան գործարարներ: Այն կազմակերպել էին սփյուռքի եւ էկոնոմիկայի նախարարությունները, Երեւանի քաղաքապետարանը, ֆրանս-հայկական առեւտրաարդյունաբերական պալատը (CCIFA) եւ Հայաստանի տնտեսական զարգացման ֆորումը (FEDA):

Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** նշեց, որ Հայաստանը հնարավորությունների երկիր է, եւ ֆրանսիական կապիտալի ակտիվացումը Հայաստանում լայն հեռանկարներ ունի: Մարսելի քաղաքապետ **Ժան Կլոդ Գոդենը** փաստեց, որ Երեւանի եւ Մարսելի համագործակցությունը նշանակալի արդյունքների է հասել, եւ ֆրանսահայ գործարարների ու ներդնողների ներկայությունը համաժողովին նման համագործակցության բարձր մակարդակի վառ վկայությունն է: Էկոնոմիկայի նախարարի տեղակալ **Տիգրան Հարությունյանը** կարեւորեց համաժողովի կազմակերպումը, ինչը հայ-ֆրանսիական հարաբերությունները տնտեսական դաշտում առավել խթանելու միտում ունի: Հայաստանում Ֆրանսիայի դեսպան **Անրի Ռենոն** տեղեկացրեց, որ Ֆրանսիան Հայաստանում առեւտրային առաջատար ներդնողն է: Նա կոչ արեց ֆրանսիական ձեռնարկություններին ներդրումներ անել Հայաստանում, որտեղ դրա համար կան նպաստավոր պայմաններ:

Ա. Ս.

# Ֆիրմային անվանումների փոխարեն՝ դեղերի միջազգային անվանումը կամ բաղադրությունը

*Գնումների ոլորտում կատարված փոփոխությունները ներկայացրեց ֆինանսների փոխնախարարը*

Մայիսից ֆինանսների նախարարությունը սահմանում է պետական մարմինների կողմից առավել հաճախ ձեռքբերվող 350 ապրանքատեսակների բնութագրերն ու դրանց առավելագույն գները, ինչը նշանակում է, որ այլեւս կբացառվի պետական մարմինների կողմից մանրածախ գնից ավելի բարձր գնով նշված ապրանքները ձեռք բերելու հնարավորությունը: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսում հայտնեց ֆինանսների նախարարի տեղակալ **Լիանա Հունանյանը** եւ ներկայացրեց պետական գնումների ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքները:

Փոխնախարարը տեղեկացրեց, որ խստացվել է հաղթած մասնակցի «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչը: Սահմանվել է, որ 350 մլն դրամից մինչեւ 1 մլրդ դրամ նախահաշվային արժեք ունեցող գնումների դեպքում նախկինում կատարված աշխատանքների ծավալը չպետք է պակաս լինի տվյալ գնման ներկայացված գնային առաջարկի 30 տոկոսից, իսկ 1 մլրդ դրամից ավելի դեպքում՝ 50 տոկոսից: Մեկ այլ փոփոխության համաձայն՝ պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքում մրցույթի հաղթողը պետք է վճարի տույժ պայմանագրի 2 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 1 մլն դրամը: Լիանա Հունանյանի հավաստմամբ, այս փոփոխությունը նվազագույնի կհասցնի պայմանագրերից միտումնավոր հրաժարվելու դեպքերը, ինչն առավելապես զգալի կլինի խոշոր մրցույթների պարագայում:

Դեղերի ոլորտում գնումների մասին ֆինանսների փոխնախարարն ասաց, որ եթե նախկինում դեղերի տեխնիկական բնութագրերում նշվում էին դրանց ֆիրմային անվանումները, ինչը նշանակում էր սկզբնապես կանխորոշել տվյալ մրցույթի ելքը եւ կոնկրետ հաղթողին, ապա այսուհետեւ գնումների հայտարարության մեջ պետք է նշվի դեղի միջազգային համընդհանուր (ջեներիկ) անվանումը կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները: Դա հնարավոր կդարձնի մրցույթում ներգրավել առավել մեծ թվով մասնակիցների:

Ա. Ս.

## ՎՐԱՍՏԱՆ

# Սաակաշվիլու վերջին օրերը... նախագահի ընտրություններ

*1-ին էջից*

**Եվ որեւէ մեկի նախագահ դառնալու պարագայում այս ընտրությունների բացառիկությունը կլինի այն, որ կկարեւորվի ոչ թե անձը, այլ այն քաղաքական ուժը, որը այդ անձին կբերի նախագահի դիրքին, քանի որ վճռորոշ դերակատարություն ունենալու է նախագահին նախագահի դարձրած քաղաքական ուժի կողմից նշանակվելիք վարչապետը:**

**Եվ քանի որ այդ դերում, արդեն իսկ արված բազմաթիվ հայտարարությունների համաձայն, չի ցանկանում լինել ներկայիս վարչապետը՝ խոստանալով հեռանալ քաղաքականությունից Սաակաշվիլու հեռանալուց հետո, ստացվում է, որ վարչապետի ապագա դերակատարի ով լինելու հարցը դեռ մնացել է առկախ: Այսինքն՝ որեւէ կողմից վարչապետի հավանական թեկնածուի մասին հայտարարություն չի արվում, չնայած շատերին է դա հետաքրքրում:**

**Նախագահի այս ընտրությունները հնարավորություն են երկրում իրական փոփոխություններ իրականացնելու առնչությամբ, եթե, իհարկե, Սաակաշվիլու հեռանալով երկրում իրերի դրությունը դեպի բարելավում ու զարգացում պետք է գնա: Իսկ այդպիսի մտադրության ու հեռանկարի մասին հայտարարել է վարչապետ Իվանիշվիլին: Սաակաշվիլին, որը ոչ միանշանակ, հաճախ ուղղակի անհասկանալի, երբեմն անկառավարելի մարդու եւ ղեկավարի տպավորություն է թողել, հաստատապես հանգստի կարիք ունի, քանի որ վերջին շրջանի նրա բոլոր քայլերը համարժեք չեն ոչ միայն իր զբաղեցրած պաշտոնին, այլեւ իրականությանը:**

**Հայաստանի հարցում էլ, փաստացի, մենք Սաակաշվիլուն հրաժեշտ տալու ուրախություն կարող ենք ապրել, քանի որ ի դեմս նրա միշտ գործ ենք ունեցել անհավասարակշիռ, Հայաստանի ու հայերի հանդեպ հարգանքի մի կտոր իսկ չդրսեւորած, սեփական հայկական արմատներից բարդույթավորված մի մարդու հետ, որը տարածաշրջանին միշտ նայել է Արեւմուտքի հովերով թռչող օդապարիկից, որի համար ներքեւում վայրէջքի փափկությունը պետք է ապահովեր Միացյալ Նահանգները: Բայց քանի որ Հայաստանի ու հայերի հանդեպ անհարգալից, ոչ կոռեկտ ու երբեմն էլ անտաշ վերաբերմունքը միայն Սաակաշվիլուն չէր հատուկ, այլ վրացի շատ այլ մանր ու մեծ պաշտոնյաների, ուրեմն նրա հեռացմամբ մեկից կազատվենք, սակայն հարեւաններից հարգանք պահանջելու կամ դրան հասնելու խնդիրը կմնա:**

**Մյուս կողմից, Սաակաշվիլու անգամ ամենացցուն ու եռանդուն հակառակորդները չեն կարող չընդունել, որ նրա նախագահությամբ ու «վարդերի հեղափոխությամբ» Վրաստանում, ի շարս բազմաթիվ դրական ու բացասական երեւույթների, մեկ, եւ կարծում եմ, էական փոփոխություն մտավ հարեւան երկրում:**

**Վրաստանն այսօր դարձել է մի պետություն, որտեղ շարքային մարդիկ կարծում եւ հավատում են, որ հնարավոր է փոխել երկրի ղեկավարներին, հնարավոր է առանց կաշառքի (ոչ մեծ–Վ.Պ.) գործ անել, հնարավոր է ու հավանական, որ շարքային մարդկանց հանդեպ պետական ծառայողները ու, ասենք, ոստիկանները լինեն սիրալիր, համբերատար ու պատրաստակամ օգնելու, այլ ոչ գիշատչի տրամաբանությամբ ինչ-որ բան պոկելու քայլեր ձեռնարկեն:**

**Այս ամենի համար Վրաստանում պետք է շնորհակալ լինեն Սաակաշվիլուն, որը գուցե այդպիսի մտադրություն էլ չուներ, ու տարբեր տեղեկությունների համաձայն՝ իր բաժին խոշոր «նվերները» ստացել է կամ կուտակել, բայց պետք է ընդունել, որ հանրության մակարդակով Վրաստանում իրերի դրությունն այլ է, քան 10, անգամ 5-6 տարի առաջ: Բայց այս պարագայում, ինչպես հայտնի ստեղծագործության մեջ, մավրն իր գործն արել է, մավրը կարող է հեռանալ... եթե, իհարկե, ներկայիս իշխանավորները նախագահի լիազորությունների ավարտից անմիջապես հետո չանցնեն Սաակաշվիլու հարցաքննությանը, այդուհետեւ դատավարությանը, ինչը ներկա դրությամբ շատ հնարավոր սցենար է:**

# «Արմենտելը» տուգանվեց, իսկ բրենդային խանութները նախազգուշացվեցին

«Օրանժ Արմենիա» ընկերությունը դիմել էր տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով՝ բողոքելով «Արմենտել» ընկերության դեմ: Դժգոհության պատճառը «Արմենտելի» կողմից վերջերս առաջարկված նոր «Պարզից պարզ» բջջային սակագնային փաթեթն է: «Օրանժ Արմենիան» արդեն ունի «Պարզ» անվանումով սակագնային փաթեթ, որը հնարավորություն է տալիս զանգեր կատարելու դեպի Հայաստանի Հանրապետության բոլոր ցանցեր միեւնույն՝ 20 դրամ/րոպե սակագնով: «Արմենտելի» «Պարզից պարզ» փաթեթը նույն հնարավորությունն է ընձեռնում 15,9 դրամ/րոպե սակագնով: Ըստ «Օրանժ Արմենիայի»՝ «Արմենտելն» օգտագործում է իր կողմից մտավոր սեփականության գործակալությունում գրանցված «պարզ» սպասարկման նշանը, համարյա նույնությամբ կրկնելով իր սակագնային փաթեթը:

Բացի դրանից՝ «Օրանժ Արմենիան» հանձնաժողովին դիմել է «Արմենտելի» կողմից անբարեխիղճ գովազդի համար: Ըստ վերջինիս գովազդային հոլովակի՝ դեղին, այսինքն՝ «Արմենտելի» բրենդային գույնով բիլիարդի գնդակները հարվածում են մյուս օպերատորների բրենդային կարմիր ու նարնջագույն գույնի գնդակներին եւ հաղթում նրանց:

Երեկ հանձնաժողովի նիստի ժամանակ նշվեց, որ հարցը մանրամասնորեն քննարկվել է, եւ հանձնաժողովն այն եզրակացությանն է եկել, որ «Արմենտելի» կողմից տեղի է ունեցել անբարեխիղճ մրցակցություն: Ինչը նկատի ունենալով՝ հանձնաժողովը որոշեց ընկերությանը տուգանել 20 մլն դրամի չափով: Ի դեպ, «Արմենտելի» ներկայացուցիչները նիստին ներկա չէին:

Հաջորդ հարցը, որ ընդգրկված էր հանձնաժողովի նիստի օրակարգում՝ բրենդային մի շարք խանութների կողմից սպառողներին մոլորեցնող գործողություններն էին, երբ դիմապակու վրա փակցված զեղչերի հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը: Այդ կապակցությամբ հանձնաժողովի ուսումնասիրությունները բերել են այն եզրակացության, որ տեղի է ունեցել հասարակության մոլորեցում, ինչը նույնպես անբարեխիղճ մրցակցություն է: «Գեսս», «Բեյսիկ Հաուս», «Կաշառել», «Օրկեստրա», «Մի-մի», «Բուգատտի», «Բրենդաութլեթ», «Ռուժ», «Շոկոլադ», «Վենեցիա», «Մոսկինո» խանութ-սրահները եւ «Վարդալ Ֆարմ» դեղատունը նման ձեւով են վարվել: Օրինակ՝ «Բեյսիկ հաուզ» խանութը փակցրել է 70 տոկոս զեղչի հայտարարություն, բայց իրականում կիրառում է 50 տոկոս զեղչ, «Կաշառելը» փակցրել է 50 տոկոս զեղչ, կիրառում է 20-30 տոկոս, «Մոսկինոն» հայտարարել է 50 տոկոս զեղչ, սակայն միայն որոշ ապրանքների համար է կիրառում զեղչ, այն էլ 20-30 տոկոս: Հանձնաժողովի ներկայացուցիչը տեղեկացրեց, որ շատ խանութներ են կիրառում այդ հնարքը, երբ հայտարարում են ընդհանուր զեղչ, բայց կիրառում են ապրանքների միայն մի մասի վրա:

Նիստին ներկա ընկերությունների ներկայացուցիչներն անմիջապես հայտարարեցին, որ ընդունում են սխալը, ասելով, որ դիտավորյալ չի արվել եւ կապված է օրենքի թյուրըմբռնման հետ: Տեղեկացվեց, որ վերոնշյալ բոլոր խանութներում խախտումը վերացվել է: Նկատի ունենալով, որ բոլոր տնտեսվարողներն ընդունել են իրենց մեղքը եւ վերացրել խախտումը, տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը նշեց, որ նրանք այս անգամ միայն կնախազգուշացվեն: «Չտուգանեցինք միայն այն պայմանով, որ այլեւս չկրկնվի, եթե նույնը նկատվի երկրորդ անգամ՝ մեծ տուգանք կնշանակվի», եզրափակեց Արտակ Շաբոյանը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Նորանկախ Հայաստանի օրենսդրության մեջ ունեցել ենք չափազանց կարեւոր դերակատարություն»

***Սեպտեմբերի վերջին Երեւանի պետական համալսարանի մեծ դահլիճում հոբելյանական հանդիսավորությամբ նշվեց իրավաբանական ֆակուլտետի 80-ամյակը։ Ֆակուլտետի դեկան** Գագիկ Ղազինյանի **հետ ստորեւ ներկայացվող ընդգրկուն զրույցը հենց այդ առիթով է։***



**- Պարոն Ղազինյան, 80 տարի առաջ հիմնադրվեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը։ Ում նախաձեռնությամբ, մասնագիտական, մանկավարժական ինչպիսի՞ ուժերով։**

- Եթե փորձենք սկսել ամենասկզբից, ապա նախ պետք է նշել, որ Հայաստանի առաջին հանրապետության Նախարարների խորհրդի 1919 թ. մայիսի 16-ի օրենքով Ալեքսանդրապոլում ստեղծվեց Հայաստանի առաջին համալսարանը՝ չորս ֆակուլտետներով։ Դրանց թվում էր եւ տնտեսաիրավաբանականը։ Համալսարանի տեսուչ (ռեկտոր) նշանակվեց հայտնի իրավագետ, Ռուսաստանում ու Եվրոպայում լայն ճանաչում ունեցող պրոֆեսոր Յուրի Ղամբարյանը։ Ֆակուլտետի ձեւավորման հիմքում կանգնած էր հենց նա, քանի որ համաձայնեց ստանձնել այդ պաշտոնը պայմանով, որ նորաստեղծ համալսարանը պետք է ունենա իրավաբանական ֆակուլտետ, ինչը, իհարկե, մի փոքր ավելի ուշ իրականացավ։ Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ Յուրի Ղամբարյանը Մոսկվայի եւ Բրյուսելի համալսարանի պրոֆեսոր էր, ղեկավարել է նախ Պետերբուրգի, ապա Թիֆլիսի համալսարանների քաղաքացիական իրավունքի ամբիոնները։ 1919 թ. դեկտեմբերի 1-ին Հռոմի համալսարանի փիլիսոփայության դոկտոր Պ. Մանուչյանը հրավիրվում է աշխատելու որպես քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր։ Համալսարանը Ալեքսանդրապոլից Երեւան փոխադրելու մասին ՀՀ Նախարարների խորհրդի 1920 թ. հունիսի 21-ի թիվ 295 որոշմամբ համալսարանում բացվում է իրավաբանական ֆակուլտետ, որին հաջորդում է Յուրի Ղամբարյանի հրամանը, որով Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետն առաջին աստիճանի դիպլոմով ավարտած Պ. Սոնիկյանը նշանակվում է իրավաբանական ֆակուլտետի իրավունքի հանրագիտարանի ամբիոնի պրիվատ-դոցենտ, Լոզանի համալսարանի իրավունքի դոկտոր Թութունջյանը՝ հայ իրավունքի պատմության ամբիոնի պրիվատ-դոցենտ, իսկ պրոֆեսոր Ս. Քեչեկյանը՝ պետական իրավունքի ամբիոնի դոցենտ։ Հայաստանի խորհրդայնացումից եւ համալսարանի կառուցվածքային վերակազմակերպումից հետո՝ 1921 թ. հունվարի 23-ին Երեւանում տեղի ունեցավ համալսարանի հանդիսավոր վերաբացումը, որից հետո իրավունքի բաժանմունքի դասախոս Գր. Չուբարյանը կարդաց առաջին դասախոսությունը՝ «Խորհրդային իրավունքը եւ Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով։ Սոցիալիստական համակարգին բնորոշ գծերը, որոնք հիմնականում նվաստացնում էին իրավունքի, իրավական ձեւի եւ ընթացակարգերի դերն ու նշանակությունը, ինչպես նաեւ պետական կառուցակարգում արհեստավարժության սկզբունքի մերժումը հանգեցրեցին իրավագիտության եւ իրավաբանական կրթության դերի նսեմացմանը։ Եվ համալսարանում իրավագիտության ֆակուլտետն ուղղակիորեն չհիմնադրվեց։ Միայն 1933-1934 ուս. տարում ձեւավորվեց ԵՊՀ իրավաբանական ինքնուրույն ֆակուլտետը, որի առաջին դեկանն է նշանակվում Կոստանդնուպոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ, Երեւանի համալսարանում ճանաչում ունեցող դասախոս Հրանտ Գալիկյանը, ում 1936 թ. համալսարանի խորհուրդը շնորհում է պրոֆեսորի կոչում։ Նա միաժամանակ ղեկավարել է նաեւ տնտեսական իրավունքի ամբիոնը։ Այս առումով կցանկանայինք հիշատակել պրոֆեսորներ Արամ Եսայանին, Արշակ Թովմասյանին, Աղասի Եսայանին, Ալեքսեյ Սուքիասյանին, Շահեն Պետրոսյանին եւ այլոց, ովքեր անուրանալի ներդրում ունեն ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի կայացման ու զարգացման գործում։

**- Ովքե՞ր էին իրավաբանականի առաջին շրջանավարտները, ի՞նչ կարողացան նրանք իրականացնել խորհրդային մեր հանրապետությունում։**

- Հանրապետության պետաիրավական ոլորտի աշխատակիցների զգալի հատվածը համալրվում էր հենց իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտներից։ Եվ դա տրամաբանական էր, քանի որ հեղափոխության արդյունքում եւ դրա հետեւանքով փոփոխվեց ամբողջ պետական կառուցակարգը եւ իրավունքի համակարգը, որի կայացման համար անհրաժեշտ էին ոչ թե հեղափոխական գործիչներ, այլ արհեստավարժ մասնագետներ, որոնք դուրս էին գալիս իրավաբանների միակ «դարբնոցից»՝ իրավաբանական ֆակուլտետից։ Եվ նրանց դերը Խորհրդային Հայաստանի պետականաշինության գործում գերագնահատել անհնար է։

**- Անկախության տարիներին հայ իրավաբանների առջեւ ծառացավ նաեւ պետականաշինության բարդ նախագծի կերտումը։ Ձեր ֆակուլտետի դասախոսների, ուսանողների գիտելիքները հաջող գործածվեցի՞ն։**

- Իրավացի եք։ 1990 թ. օգոստոսի 23-ի Հայաստանի անկախության մասին հռչակագրով դրվեց ոչ միայն անկախության գործընթացի, այլեւ նոր իրավական համակարգի եւ նոր տիպի պետության կառուցման սկիզբը։ Դժվար է միանշանակ գնահատական տալ մեր դասախոսների եւ ուսանողների գիտելիքների հաջող օգտագործմանը։ Բայց մի բան ակնհայտ է. նորանկախ Հայաստանի նոր օրենսդրության, այդ թվում՝ Սահմանադրության մշակման գործում մեր ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը եւ շրջանավարտները ունեցել են եւ ունեն չափազանց կարեւոր դերակատարություն՝ համապատասխան նախագծերը պատրաստելու եւ դրանց իրավական փորձաքննություն իրականացնելու առումով։

**- Ի՞նչ ձեռքբերումներ, ի՞նչ խնդիրներ ունի ֆակուլտետը։**

- Շատ դժվար է այս հարցերին հակիրճ պատասխանել, քանի որ դրանցից յուրաքանչյուրն առանձին հարցազրույցի թեմա է։ Այնուամենայնիվ փորձեմ։ Ձեռքբերումները զգալի են. ֆակուլտետն այսօր ունի Հանրապետությունում ամենից որակյալ եւ արհեստավարժ պրոֆեսորադասախոսական անձնակազմը, որի ներկայացուցիչները կարող են ընդգծել իրենց մասնագիտական առավելությունը Հայաստանում, ինչպես նաեւ մրցունակ լինել միջազգային ասպարեզում։ Դասախոսների միջին տարիքը 35 է, ինչը եւս մեկ կարեւոր ցուցանիշ է ձեռքբերումների ասպարեզում։ Ավելին, մեր պրոֆեսորադասախոսական անձնակազմի գերակշիռ մասը վերապատրաստվել է արտասահմանում՝ ԱՄՆ, ԵՄ, ՌԴ եւ այլն։

Ֆակուլտետն իր տեխնիկական ապահովվածությամբ չի զիջում հանրապետության ոչ մի այլ համալսարանի իրավագիտական ֆակուլտետի, եթե չասենք գերազանցում է։ Վերջին 15 տարիների ընթացքում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը հեղինակել է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի ու ոլորտների վերաբերյալ նոր օրենսդրության հիման վրա պատրաստված դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ եւ այլ գրականություն։

Կարծում եմ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը ունի նույն խնդիրները, ինչ մեր հասարակությունը՝ իհարկե, ուրույն առանձնահատկություններով։ Կարեւորագույն խնդիր է մեր դասախոսների ֆինանսական ապահովվածության հարցը։ Առկա պայմաններում չափազանց դժվար է զբաղվել գիտական աշխատանքով եւ փորձել դրանում գրանցել առաջընթաց՝ նյութական առումով։ Իհարկե, գրեթե բոլոր դասախոսները պետական եւ մասնավոր ոլորտում զբաղվում են մասնագիտական աշխատանքով՝ իրենց գիտելիքները կիրառելով պրակտիկայում եւ պրակտիկան բերելով լսարան, կրթության ոլորտում դրական գործընթաց գրանցում, այնուամենայնիվ մենք խնդիր ունենք լավագույն մասնագետներին ֆակուլտետում մշտապես պահելու եւ նրանց միջոցով իրավաբանական գիտությունը եւ հայկական իրավաբանական դպրոցը զարգացնելու հարցում։

Կարծում եմ, խնդիր պետք է համարել նաեւ այն, որ ֆակուլտետը որեւէ ձեւով չի մասնակցում ուսանողների ընտրության եւ նրանց քանակի որոշման գործընթացին։ Փաստորեն ամեն տարի ստանում ենք նոր ընդունված ուսանողների ցուցակ, որոնց զգալի հատվածը կրթություն ստանալու գործում սեփական ունակությունների պատճառով խնդիրներ է ունենում։ Թեեւ նախորդ տարի այս իմաստով որոշակի առաջընթաց ենք արձանագրել։ Խնդիր է նաեւ անվճար տեղերի եւ դրանով պայմանավորված ռոտացիոն կարգի բացակայությունը մեր ֆակուլտետում, ինչը, կարծում ենք, լուրջ խոչընդոտ է ուսանողների միջեւ առողջ մրցակցության խթանման համար։

**- Ձեր ֆակուլտետը համագործակցո՞ւմ է արտասահմանյան համալսարանների համանուն ֆակուլտետների հետ։ Եթե այո, ինչպիսի՞ համագործակցություն է դա։**

- Համագործակցում ենք ինչպես Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, այնպես էլ Եվրոպական միության անդամ պետություններում գործող իրավաբանական ինստիտուտների եւ ֆակուլտետների հետ։ Համագործակցությունը բազմաբովանդակ է։ Այն չի սահմանափակվում միայն համագործակցության հուշագրերի ստորագրմամբ, այլեւ ներառում է գիտակրթական տարբեր բնագավառներում համագործակցության հստակ կառուցակարգերի մշակում եւ հետեւողական կենսագործում։

**- Մասնագիտական խոր գիտելիքների հետ անհրաժեշտ է նաեւ օտար լեզուների իմացությունը։ Ձեր ֆակուլտետի ուսանողները կարո՞ղ են միջազգային տարբեր ֆորումներում ազատ հաղորդակցվել, բանավիճել մասնագիտական հարցերի շուրջ։**

- Իհարկե, կարող են։ Յուրաքանչյուր տարի մեծ թվով ուսանողներ մասնակցում են նման միջոցառումների։ Մեր ուսանողները, ինչպես արդեն նշեցինք, ոչ միայն ունակ են հաջողությամբ հանդես գալ միջազգային համաժողովներում եւ գիտական այլ միջոցառումներում, այլ նաեւ բարձր պահել ԵՊՀ, ՀՀ պատիվը ու հայրենիք վերադառնալ հաղթանակներով եւ պատվոգրերով։

**- Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման, ԼՂՀ ճանաչման գործում մեծ պիտի լինի իրավաբանների դերը։ Ֆակուլտետը պատրաստո՞ւմ է նեղ մասնագիտացմամբ միջազգայնագետներ։**

- Համաձայն եմ։ Այդ խնդիրների լուծման գործում չպետք է թերագնահատել իրավաբանների դերը, ինչն այսօր, կարծում եմ, այդպես է։ Ֆակուլտետն ունի Եվրոպական եւ միջազգային իրավունքի ամբիոն, որը մեր դինամիկ զարգացող ամբիոններից է եւ, կարծես թե, ամենաերիտասարդ դասախոսների թվով առաջինն է ֆակուլտետում։ Ունենք առանձին դասընթաց՝ նվիրված Հայոց ցեղասպանության միջազգային իրավական հիմնահարցերին։ Ամբիոնի ասպիրանտները, դասախոսները հետազոտում են այնպիսի արդիական թեմաներ, ինչպիսիք են Հայոց ցեղասպանության, ԼՂՀ հիմնահարցի տարաբնույթ իրավական հիմնախնդիրները, պետությունների միջազգային պատասխանատվությունը, միջազգային կազմակերպությունների շրջանակներում պետությունների համագործակցության առանձնահատկությունները, դեպի ծով ելք չունեցող պետությունների միջազգային իրավական հիմնահարցերը եւ այլ արդիական ու ՀՀ-ի համար չափազանց կարեւոր թեմաներ։

**- Համարյա բոլոր ոլորտներում իրավաբանի կարիք կա, սակայն վիճակագրությունը միշտ փաստում է, թե մեր հանրապետությունում այդքան պահանջարկ չկա, մանավանդ այդ մասնագիտությամբ կրթություն միայն ԵՊՀ-ում չեն ստանում։ Ձեր ֆակուլտետի շրջանավարտը մրցունա՞կ է, ո՞րն է նրա առավելությունը նույն մասնագիտությունը ստացած ուրիշ բուհի շրջանավարտից։**

- Մեր ֆակուլտետում տրամադրվող գիտելիքը թե՛ տեսական, թե՛ գործնական բովանդակությամբ համալիր է ու համապարփակ։ Փորձում ենք այնպես կազմակերպել գիտելիքի փոխանցումը, որ ուսանողը, ֆակուլտետն ավարտելով, արդեն ունենա հիմնարար գիտելիքներ իրավաբանության բնագավառում, ինչպես նաեւ տիրապետի դրանք ճիշտ գործադրելու կառուցակարգերին։ Թերեւս սա է մեր կարեւորագույն առավելությունը, որ մեր շրջանավարտին մրցունակ է դարձնում շուկայում, իսկ հաճախ նաեւ՝ անհասանելի այլ ԲՈՒՀ-երի շրջանավարտների համար։

**- Պարոն Ղազինյան, երբ ժողովուրդը խոսում է արդարության պակասից, հաճախ առաջին հերթին հիշատակում է իրավապահ համակարգը։ Դուք ինչպե՞ս եք մեկնաբանում սա։**

- Որ արդարության պակասն առկա է, ոչ ոք չի հերքում։ Եվ դժվար թե լինի մարդկային այնպիսի մի համակեցություն, որտեղ մարդիկ չզգան արդարության պակաս, քանի որ դա մարդ արարածի հետ անքակտելիորեն կապված որակ է։

Իսկ որ այս հարցի հետ առաջին հերթին ժողովուրդը հիշատակում է իրավապահ համակարգը, զարմանալի չէ, քանի որ հենց այդ համակարգն է, որ կոչված է երաշխավորելու իրավակարգի պահպանումը եւ դրանով իսկ՝ արդարության կենսագործումը։ Եվ ժողովրդի ակնկալիքները հենց այս համակարգին են հանգում։ Սակայն միայն այդ համակարգն ընդգծելը սխալ է, որովհետեւ արդարության պակասի խնդիրը համահամակարգային է, եւ այն չի կարող դիտարկվել միայն մի տարրի կամ գործոնի տեսանկյունից։ Ինչքան էլ կատարյալ իրավապահ համակարգ ստեղծենք թե՛ տեսական կառուցակարգերով, թե՛ իրական կյանքում գործնական ինստիտուտներով եւ մարմիններով, այդ ամենը շատ կարճ ժամանակահատվածում կրկին կթեւակոխի թերությունների անհաղթահարելի շղթայի մեջ, եթե խնդրին համակարգային մոտեցում չցուցաբերենք՝ դրանում առկա բազմաթիվ գործոնների փոխներազդեցությունների գնահատմամբ։

Այսինքն՝ արդարության պակասի հաղթահարման համար անհրաժեշտ է վերափոխել եւ զարգացնել թե՛ անհատական եւ կոլեկտիվ իրավագիտակցությունը հենց այդ նույն ժողովրդի մոտ, թե՛ իրավաստեղծ, գործադիր-իրավակիրառ եւ իրավապահ համակարգերում։ Եվ միայն դրանից հետո կարող ենք ասել, որ աշխատում ենք արդարության պակասի հաղթահարման ուղղությամբ։ Այլապես, հատվածային աշխատանքները, անգամ ամենամեծ ցանկության դեպքում, դատապարտված են անհաջողության։

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# Մերկելի հեռագի՞րը, թե՞ Լուկաշենկոյի ծաղկեփունջը

Երեկ Իլհամ Ալիեւը միանգամից երկու «անակնկալ» նվեր է ստացել: www. president.az-ի՝ նրա պաշտոնական կայքի փոխանցմամբ, «Ադրբեջանի նախագահը երրորդ ժամկետով պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ շնորհավորական հեռագիր է ստացել ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելից»:

Ճիշտ է, իլհամալիեւյան աշխատակազմում դեռ չեն հասցրել կայքի ռուսերեն եւ անգլերեն տարբերակներում տեղադրել Մերկելի հեռագիրը, բայց haqqin.az-ը նրբորեն հասկացրել է, որ եթե Իլհամ Ալիեւը Մերկելին չշնորհավորեր երրորդ անգամ կանցլեր ընտրվելու առթիվ, ապա հազիվ թե ֆրաու Անգելան իրեն թույլ տար նրան համարել «Ադրբեջանում ժողովրդավարական պետություն կառուցող»:

Մերկելի հեռագրում, ի դեպ, ակնարկ կա, որ Գերմանիան «պատրաստ է աջակցելու» Իլհամ Ալիեւին բացառապես ԵՄ արեւելյան գործընկերությանն Ադրբեջանի «հետագա ներգրավվածությանը համաչափորեն»: Սա, թերեւս, ամենագլխավոր ուղերձն է, որ Բեռլինից փոխանցվել է Բաքու:

Մինչդեռ Իլհամ Ալիեւը փաստացի երդմնազանց է եղել: Նախագահական «ընտրությունների» օրն ընդունելով Թուրքիայի կառավարող կուսակցությունից դիտորդական խմբին, նա հավաստիացրել էր, որ «արտասահմանյան առաջին ուղեւորությունը կկատարի եղբայրական Թուրքիա»: Երեկ Իլհամ Ալիեւը գտնվել է... Մինսկում եւ մասնակցել ԱՊՀ հերթական գագաթաժողովին:

Բացառված է, որ երբ հոկտեմբերի 9-ին նա խոստանում էր, որ առաջին ուղեւորությունը կկատարի Թուրքիա, տեղյակ չէր, որ հոկտեմբերի 25-ին տեղի է ունենալու ԱՊՀ գագաթաժողովը: Հետեւաբար, նա ծրագրել էր Թուրքիայում լինել մինչ այդ, բայց կամ Անկարայում նրան չէին սպասում, կամ ինքն է հուսախաբ արել «ավագ եղբորը» եւ նախապատվությունը տվել շրջագայության հյուսիսային ուղղությանը:

Իսկ Մինսկում, կարելի է ասել, նրան գոնե Բելառուսի նախագահ Լուկաշենկոն սպասում էր անհամբեր: Ալեքսանդր Գրիգորեւիչը նախ փայլեց նրանով, որ Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության հարցում դրեց «Ադրբեջանի տեսակետը հաշվի առնելու» հանգամանքը, ապա ավելացրեց, թե տեղյակ է, որ Իլհամ Ալիեւն արդեն իսկ այդ կապակցությամբ հարցրել է Ղազախստանի կարծիքը:

Երեկ էլ Լուկաշենկոն, մինչ ԱՊՀ գագաթաժողովը կանցներ հարցերի քննարկմանը, որպես «բոլորի ընդհանրական կարծիք», հարգելի Իլհամ Ալիեւին շնորհավորել է ընտրություններում համոզչագույն հաղթանակի կապակցությամբ եւ նրան Ադրբեջանի նախագահի պաշտոնում հանուն այդ պետության եւ ժողովրդի ծաղկման հաջողություններ մաղթել»:

Լուկաշենկոյի այս բարեմաղթանքներից հետո «ազգային տարազով աղջիկներն Իլհամ Ալիեւին ծաղկեփունջ են մատուցել»,- գործակալությանը հղելով՝ տեղեկացրել է haqqin.az-ը: Ընդ որում, Բելառուսի նախագահը կատակով ավելացրել է, որ «երեկ փող հավաքեցինք, Վլադիմիր Վլադիմիրովիչը (ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը) առաջարկեց ծաղիկներ գնել», ինչին ի պատասխան Իլհամ Ալիեւը շնորհակալություն է հայտնել եւ ասել, թե «դա մի փոքր անսպասելի էր»:

Պետք է արժանին մատուցել Բելառուսի նախագահի ռեժիսորական տաղանդին. «անակնկալն», իրոք, չափազանց խորհրդանշական է ստացվել: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ Բաքվում իշխող վարչախմբին մոտ կանգնած virtualaz.org-ը, հղում անելով «սեփական իրազեկ» աղբյուրներին, չի բացառել, որ «ԱՊՀ գագաթաժողովի փակ հանդիպումների ձեւաչափով կքննարկվի Մաքսային միությանն Ադրբեջանի հնարավոր անդամակցության հարցը»:

Ավելի վաղ Ղազախստանի նախագահը խոսել էր «Մաքսային միությանն անդամակցելու Թուրքիայի ցանկության» մասին, բայց ինչո՞ւ բացառել, որ հենց Ադրբեջանի նախագահն է Նազարբաեւին խնդրել, որպեսզի այդ մասին բարձրաձայնի: Չէ՞ որ Թուրքիան եւ Ադրբեջանը «երկու պետություն, բայց մեկ ազգ են»: Երեկ Մաքսային միությանն Ադրբեջանի հավանական անդամակցության խնդրին անդրադարձել է նախկին պետական խորհրդական Վաֆա Գուլուզադեն:

Նրա կարծիքով, եթե Ադրբեջանն անդամակցի ՄՄ-ին, ապա «նավթային եկամուտները կվերահսկվեն Ռուսաստանի կողմից, Ադրբեջանը կհայտնվի Օրհան Ջեյնալովի (Մոսկվայում 25-ամյա Եգոր Շչերբակովի սպանության մեջ մեղադրվողի) վիճակում»: Գուլուզադեն նաեւ ասել է, որ «Ռուսաստանը երբեք չի լուծի Ղարաբաղի հարցը», իսկ Ադրբեջանի համար «միակ նախընտրելի ճանապարհը եվրոինտեգրացիան է»:

Նախկին պետական խորհրդականն, այդուհանդերձ, անզգուշություն է թույլ տվել եւ քննադատել այն մարդկանց, որ «այստեղ (Բաքվում) քարոզում են Ադրբեջանի մուտքն այդ կազմակերպություն (Մաքսային միություն)»: Կարելի է, ուրեմն, եզրակացնել, որ Ադրբեջանի իշխող վարչախմբում աշխարհաքաղաքական վերակողմնորոշման հարցն առնվազն քննարկվում է:

Ստեղծված իրավիճակում ո՞ւմ հույսերը կարդարանան՝ Գերմանիայի կանցլեր Մերկելի՞, ով Ադրբեջանը տեսնում է ԵՄ արեւելյան գործընկերության շրջանակներում, թե՞ Բելառուսի նախագահ Լուկաշենկոյի: Մերկելի չոր հեռագի՞րն է ընդունելի, թե՞ Լուկաշենկոյի մատուցած ծաղկեփունջը: Մանավանդ որ Մերկելը խոսել է միայն իր անունից, իսկ Լուկաշենկոյի ծաղկեփունջը, ինչպես ինքն է ասել, «գնվել» է Վլադիմիր Վլադիմիրովիչի առաջարկությամբ եւ «կոլեկտիվ հանգանակությամբ»...

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՍՏԱՄԲՈՒԼ

# Բրահիմի. «Ընդդիմությունը չի կարող հաղթել Ասադին»

*Ամերիկյան ռազմանավերի մի մասը հեռանում է Սիրիայի ափերից*



**Սիրիայում ՄԱԿ-ի եւ Արաբական պետությունների լիգայի հատուկ դեսպանորդ Լախդար Բրահիմին Ստամբուլում հանդիպում է ունեցել ընդդիմադիր «Սիրիական ազատ բանակի» հրամանատարության ներկայացուցիչների հետ: Բրահիմին «Սիրիական ազատ բանակի» ղեկավարներին հայտարարել է, որ Սիրիայի հակամարտությունը «չունի ռազմական լուծում»:**

**Իսրայելական «Քոլ Իսրայել» ռադիոկայանը մեջբերում է Բրահիմիի այն խոսքերը, որ Սիրիայի կառավարական զորքերի նկատմամբ ընդդիմության հաղթանակն անհնար է այն ծավալուն օգնության պատճառով, որ ստանում է նախագահ Բաշար Ասադի վարչակարգը:**

**Սիրիացի ընդդիմադիրների հետ Բրահիմիի հանդիպումն անցկացվում էր սիրիական հակամարտության խաղաղ կարգավորման ժնեւյան կոնֆերանսի նախապատրաստման շրջանակներում:**

**Ընդդիմադիր ուժերի գլխավոր կազմակերպությունը՝ «Ազգային կոալիցիան», դեռ չի որոշել՝ կմասնակցի՞ արդյոք կոնֆերանսին: Ղեկավարությունը այդ հարցին նվիրված խորհրդակցություն է անցկացնելու նոյեմբերի 9-ին:**

**Ինչ վերաբերում է Միջերկրական ծովի արեւելքում վերջերս կուտակված ամերիկյան ռազմանավերին, News Channel 3 կայքէջը հաղորդում է, որ դրանց մի մասն առաջիկա շաբաթներին կվերադառնա ԱՄՆ-ում գտնվող մշտական ռազմակայան:**

**Ամերիկյան ծովուժի շտաբի պետ, ծովակալ Ջոնաթան Գրինեյի խոսքերով, ռազմանավերի խումբը արդեն կատարել է իր մարտական խնդիրը եւ կարող է «Նիմից» ավիակրի գլխավորությամբ վերադառնալ Բրեմերտոնի ռազմակայան (Վաշինգտոնի նահանգ): Ապա Սիրիայի ափերից կհեռանան «Բերրի» եւ «Գրեյվի» էսկադրային ականակիրները եւ կմեկնեն Ատլանտյան օվկիանոսի ափին գտնվող Նորֆոլկի ռազմակայան:**

**Արեւելյան Միջերկրածովքում կմնա ընդամենը 3 ամերիկյան ռազմանավ՝ «Ստաուտ» եւ «Ռեմեջ» էսկադրային ականակիրները եւ «Մոնտերեյ» հրթիռային հածանավը: Ծովակալ Գրինեյի խոսքերով, դրանք «բավարար» պոտենցիալ» են ստեղծում, որպեսզի Սիրիայի կառավարությանը ստիպեն ձեռնարկելու սեփական քիմիական զենքի ոչնչացմանն ուղղված միջոցներ:**

Պ. Ք.

# Ղրղզա-տաջիկական հակամարտություն նավթի պատճառով

Ղրղզստանի եւ Տաջիկստանի միջեւ սահմանային վեճեր են ծագել «Կասսա-Թուզ» նավթահորի պատճառով, հաղորդում է Ֆերգանա գործակալությունը:

Ղրղզական սահմանային ծառայության տվյալներով, հինգշաբթի օրը մի խումբ տաջիկ սահմանապահներ ներխուժել են Ղրղզստանի տարածքում գտնվող նավթահորի տեղամաս եւ պահանջել են իրենց հանձնել այդ օբյեկտը:

24.kg գործակալությունը պնդում է, թե անկոչ սահմանապահների հետ եկած Տաջիկստանի ներկայացուցիչները նույնիսկ ձեռնամուխ են եղել հանքավայրի մշակմանը: Դա հարուցել է ղրղզ գյուղացիների դժգոհությունը, որոնք սկսել են հավաքվել նավթահորի մոտ: Գործակալության տվյալներով, հակամարտ կողմերը ընդհարվել են:

Հոկտեմբերի 25-ին հայտնի դարձավ, որ հակամարտությունը ժամանակավորապես հարթվել է: Ղրղզստանի սահմանապահ ծառայության ղեկավար Կումանկուն Մատենվի եւ Տաջիկստանի սահմանապահ զորքերի գլխավոր վարչության պետ Շերալի Միրզոյի հեռախոսազրույցի ընթացքում որոշվել է, որ տաջիկական կողմը հետ կկանչի իր սահմանապահներին: Վիճելի տարածքի օգտագործման հարցը հետագայում պետք է լուծի սահմանազատման եւ սահմանագծման միջկառավարական հանձնաժողովը:



«Կասսա-Թուզ» նավթահանքը գտնվում է Ղրղզստանի Բատկենի մարզի Լեյլեկի շրջանում, սահմանի չհամաձայնեցված տեղամասի մոտ: Անցյալում դրա շահագործմամբ զբաղվում էր Տաջիկստանը: «Ազատություն» ռադիոկայանի տեղական ծառայության տվյալներով, տաջիկներն այդ նավթահորը մշակել են 1980-ականներից:

Անցյալ ամռանը ղրղզական կողմը իր վերահսկողության տակ առավ նավթահորը: «Վեչերնի Բիշքեկ» թերթի տվյալներով, այն պաշտպանում են ղրղզ սահմանապահները: Ըստ որում, աշխատանքներն օբյեկտում դադարեցված են:

«Ազատություն» ռադիոկայանի տվյալներով, Տաջիկստանի եւ Ղրղզստանի 971 կիլոմետրանոց սահմանի վրա մինչեւ օրս հստակորեն նշագծված է միայն 567 կիլոմետրը: Միայն Իսֆարի շրջանում կան տասնյակ վիճելի տեղամասեր, որոնց պատճառով անցյալում ծագած հակամարտությունները հանգեցրել էին սահմանների եւ ճանապարհների շրջափակմանը:

## Մարզական

# Կարո Մուրադը պատրաստ է Հոպկինսից խլելու աշխարհի չեմպիոնի գոտին




Այսօր ԱՄՆ-ի Ատլանտիկ Սիթի քաղաքում հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Կարո Մուրադը կմենամարտի IBF-ի վարկածով կիսածանրքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն, 48-ամյա անվանի բռնցքամարտիկ Բեռնարդ Հոպկինսի հետ: Այդ մենամարտը իսկայական հետաքրքրություն է ներկայացնում: 30-ամյա Կարո Մուրադին հնարավորություն է ընձեռվել ձեռնոց նետելու աշխարհի չեմպիոնին եւ տիրելու չեմպիոնական գոտուն, ինչն այնքան էլ դյուրին խնդիր չէ: Թեեւ բռնցքամարտիկի համար պատկառելի տարիքին, Հոպկինսն այսօր էլ իրենից մեծ ուժ է ներկայացնում եւ լավ մարզավիճակում է:

Մենամարտի նախօրեին կայացած մամուլի ասուլիսում **Բեռնարդ Հոպկինսը** հետեւյալն է ասել. «Ես ռինգ եմ դուրս գալիս ապացուցելու բոլորին, որ ոչ միայն տարբերվում եմ մյուսներից, այլեւ չեմ հոգնել իմ աշխատանքը կատարելուց: Ես այլմոլորակային եմ, ուստի չեմ ծերանում: Ճիշտ է, պետք է խոստովանեմ, որ գրեթե 10 տարի նոկաուտով չեմ հաղթել: Գուցե դա տարիքով է պայմանավորված:

Երբ դու երիտասարդ ես, փորձում ես արդարանալ, թե ինչու 40-ից բարձր տարիք ունեցող բռնցքամարտիկը չպետք է քեզ հաղթի: Իսկ երբ ինձ հետ հայտնվում ես ռինգում, հասկանում ես, որ ամեն ինչ այդքան էլ հեշտ չէ, ինչպես պատկերացնում էիր: Կարո Մուրադը սարսռում է ինձանից եւ արդեն 4 ռաունդ պարտվել է»:

Ի պատասխան Հոպկինսի այդ խոսքերի, **Կարո Մուրադը** նշել է, որ շաբաթ օրը բոլորն ականատես կլինեն, թե ինչպես է Գերմանիայում բնակվող սովորական երիտասարդը Հոպկինսի հայրենիքում նրանից խլում չեմպիոնական գոտին:

Կարո Մուրադը պրոֆեսիոնալ բռնցքամարտիկի կարիերան սկսել է 2006-ին կիսածանրքաշային կարգում: Նրա առաջին մրցակիցները ցածր վարկանիշ ունեցող բռնցքամարտիկներ էին: 2007-ին նա հաղթեց Ջերեմի Մեկիին եւ նոկաուտի ենթարկեց Էմիլյան Ցեյտանոյին: Հաջորդ տարի փետրվարին նոկաուտի ենթարկելով ռուսաստանցի Սերգեյ Խարչենկոյին, Մուրադը նվաճեց EBU-EE-ի վարկածով չեմպիոնի թափուր տիտղոսը: 2008-ի ապրիլին նա իտալացի փորձառու բռնցքամարտիկ Քրիստիան Սանավիի հետ մենամարտում նվաճեց EBU-ի վարկածով Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:

2008-ի սեպտեմբերի 20-ին հայ բռնցքամարտիկը հաջողությամբ պաշտպանեց իր տիտղոսը՝ հաղթելով իսպանացի Գաբրիել Կամպիլյոյին: 2009-ին Մուրադը Սանավիի հետ ռեւանշ-մենամարտում նոկաուտի ենթարկեց մրցակցին: Իսկ սեպտեմբերին նվաճեց WBO-ի վարկածով միջմայրցամաքային չեմպիոնի տիտղոսը՝ պարտության մատնելով Սերգեյ Դեմչենկոյին: Այդ տիտղոսը 2 անգամ հաջողությամբ պաշտպանելուց հետո Կարո Մուրադը 2009-ի սեպտեմբերին մենամարտեց անպարտելի Նաթան Կլեւերլիի հետ: Հաղթելու դեպքում հայ բռնցքամարտիկը կդառնար WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսի պարտադիր հավակնորդ: Սակայն մրցակիցը 10-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց Մուրադին: Դա վերջինիս 1-ին պարտությունն էր պրոֆեսիոնալ ռինգում, որն առայժմ միակն է: 25 մենամարտերում Մուրադը հաղթել է, մեկ մենամարտ ավարտել է ոչ-ոքի:

Ամերիկացի Բեռնարդ Հոպկինսը պրոֆեսիոնալ ռինգում մեծ հաջողությունների է հասել: Նա ժամանակին միջին եւ կիսածանրքաշային կարգերում նվաճել է IBF-ի,WBC-ի, WBA-ի, WBO-ի, IBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոնի տիտղոսները: Նա 1-ին բռնցքամարտիկն է, ում հաջողվել է աշխարհի չեմպիոն հռչակվել պրոֆեսիոնալ բռնցքամարտի 4 հիմնական վարկածներում՝ WBA, WBO, WBC, IBF:

Բեռնարդ Հոպկինսը բռնցքամարտի պատմության մեջ աշխարհի ամենատարեց գործող չեմպիոնն է: Առաջին անգամ նա այդ տիտղոսը նվաճել է 46 տարեկանում, 2-րդ անգամ՝ 48 տարեկան 52 օրականում: Հոպկինսը պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 63 մենամարտերից շահել է 53-ը, 2-ն ավարտել է ոչ-ոքի, կրել է 6 պարտություն:

ԱՄՆ-ում կայանալիք մենամարտում բուքմեյքերները նախապատվությունը տալիս են Բեռնարդ Հոպկինսին: Նրա հաղթանակի գործակիցը 1,1 է, մինչդեռ Կարո Մուրադի հաջողության համար խաղադրույքներ են ընդունվում 6,5 գործակցով:

# Արթուր Աբրահամը հավատում է իր հաղթանակին

Այսօր Գերմանիայի Օլդենբուրգ քաղաքում 2-րդ միջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Արթուր Աբրահամը կմենամարտի իտալացի Ջիովանի դե Կարոլիսի հետ:

Արթուր Աբրահամը վստահ է իր ուժերին. «Լավ է, որ վերադարձա Օլդենբուրգ: Այստեղ եմ առաջին անգամ անցկացրել աշխարհի չեմպիոնի տիտղոսի պաշտպանությունը: Մարդիկ այստեղ միշտ ուրախ են լավ մենամարտ դիտելու: Պատրաստվում եմ նրանց լավ բռնցքամարտ ներկայացնել: Որեւէ մենամարտ հեշտ զբոսանք չէ բռնցքամարտիկի համար: Ես չեմ թերագնահատում Կարոլիսին, սակայն հաղթելու եմ նրան»:

Աբրահամ-Կարոլիս մենամարտը ցուցադրվելու է գերմանական ARD հեռուստաալիքով, ինչպես նաեւ Հայաստանի հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերում:

Ջիովանի դե Կարոլիսը 20 մենամարտերում հաղթել է, 4-ում պարտվել է: Արթուր Աբրահամը 37 հաղթանակ է տոնել պրոֆեսիոնալ ռինգում, 4-ում պարտվել է, մեկն ավարտել է ոչ-ոքի:

# Պատանեկան հավաքականն անհաջողության մատնվեց

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 15 տարեկանների պատանեկան հավաքականին չհաջողվեց 2014-ին Չինաստանի Նանկին քաղաքում կայանալիք ամառային պատանեկան օլիմպիական խաղերի ուղեգիր նվաճել: Մեր հավաքականը Շվեյցարիայի Նիոն քաղաքում անհաջող հանդես եկավ եվրոպական գոտու ընտրական մրցաշարում: Հայ ֆուտբոլիստները 0-3 հաշվով պարտվեցին Մոլդովայի հավաքականին, այնուհետեւ 1-2 հաշվով զիջեցին ֆիններին ու դուրս մնացին հետագա պայքարից:

## ՇԱԽՄԱՏ

# Ուսումնամարզական հավաք Ծաղկաձորում

**Armchess.am-ի տեղեկացմամբ, շախմատի Հայաստանի տղամարդկանց եւ կանանց հավաքականները Ծաղկաձորում մարզիչներ Արշակ Պետրոսյանի եւ Արթուր Չիբուխչյանի գլխավորությամբ սկսել են նախապատրաստվել նոյեմբերի 7-ին Վարշավայում մեկնարկող Եվրոպայի թիմային առաջնությանը:**

**Ինչպես հայտնի է, այս օրերին Լիլիթ Մկրտչյանն ու Էլինա Դանիելյանը «Միկայի» կազմում, իսկ Սերգեյ Մովսիսյանը՝ Սանկտ Պետերբուրգի թիմի կազմում մասնակցում են եվրոգավաթների խաղարկությանը, ուստի մի փոքր ուշ կմիանան իրենց թիմակիցներին: Հայաստանի տղամարդկանց հավաքականը Եվրոպայի առաջնությունից հետո կմասնակցի նոյեմբերի 24-ին Թուրքիայի Անթալիա քաղաքում մեկնարկելիք աշխարհի թիմային առաջնությանը:**

# Հավակնորդների մրցաշարը կանցկացվի մարտին

**ՖԻԴԵ-ն որոշել է 2014-ին Խանտի-Մանսիյսկում կայանալիք հավակնորդների մրցաշարի անցկացման ժամկետը: Մրցաշարը, որին կմասնակցի նաեւ Լեւոն Արոնյանը, կանցկացվի մարտի 12-30-ը:**

# «Միկան» փոփոխակի հաջողությամբ է հանդես գալիս



**Հունաստանում ընթացող շախմատի եվրոպական գավաթների խաղարկությունում «Միկան» առայժմ փոփոխական հաջողությամբ է հանդես գալիս: Նախորդ տուրում կրած պարտությունից հետո «Միկան» 2,5-1,5 հաշվով հաղթեց սերբական BAS-ին: Մեր թիմի հաղթանակն ապահովեցին Էլինա Դանիելյանն ու Լելա Ջավախիշվիլին, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Անջելիկա Ստոյանովիչին եւ Իրինա Չելյուսկինային: Լիլիթ Մկրտչյանը պարտվեց Իննա Գապոնենկոյին, իսկ Հարիկա Դրոնավալին հերթական ոչ-ոքին խաղաց Նատաշա Բոյկովիչի հետ:**

**5 տուրից հետո «Միկան» 6 միավորով 4-րդ տեղում է: Առաջատարը Մոնտե Կառլոյի թիմն է, որը գործնականում ապահովել է չեմպիոնի տիտղոսը՝ տոնելով 5-րդ անընդմեջ հաղթանակը: Այս անգամ առաջատարը 2,5-1,5 հաշվով հաղթեց «Պոլիտեխնիկա Անտիբիոտիկե» թիմին, որը 6 միավորով 3-րդ տեղում է: 7 միավոր է վաստակել «Յուգրան»՝ ոչ-ոքի խաղալով «Նաշե Նասլեդիե» թիմի հետ:**

**Տղամարդկանց մրցաշարում Սանկտ Պետերբուրգի թիմը 3,5-2,5 հաշվով հաղթեց «Ռադովային»: Սերգեյ Մովսիսյանը 4-րդ խաղատախտակի վրա հաղթեց Միչել Գոդենային: Սանկտ Պետերբուրգի թիմը 8 միավորով 5-րդ տեղում է: Միանձնյա առաջատարը ՍՈԿԱՐ-ն է, որը 4-2 հաշվով հաղթեց «Յուգրային»՝ տոնելով 5-րդ անընդմեջ հաղթանակը: 2-րդ տեղում 9 միավոր վաստակած «G-Team-ն» է, որը 4,5-1,5 հաշվով պարտության մատնեց «Էյնաթենին»:**

# ՀՄԴ-ի թիմը մրցակցությունից դուրս էր

**Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մարզասրահում իրենց մրցավեճն ավարտեցին Հայաստանի չեմպիոնի տիտղոսը վիճարկող մինչեւ 16 տարեկան հանդբոլիստուհիները: 6 թիմերի մրցավեճում ուժեղագույնը հանդբոլի Երեւանի մասնագիտացված մարզադպրոցի (ՀՄԴ) հավաքականն էր, որը հաղթեց իր բոլոր մրցակիցներին: Անահիտ Հարությունյանի սաները մրցումների վերջին օրը 20-9 հաշվով վստահ հաղթանակ տոնեցին Շենգավիթի թիմի նկատմամբ:**

**Իսկ ահա մրցանակային 2-րդ եւ 3-րդ տեղերի համար բավականին թեժ պայքար էր ծավալվել: Ի վերջո 3 թիմեր վաստակեցին հավասար միավորներ եւ հարկ եղավ հաշվել խփած ու բաց թողած գնդակների տարբերությունը: Այդ ցուցանիշով արծաթե մեդալները բաժին հասան վանաձորցիներին, իսկ բրոնզե մրցանակակիր դարձավ Արցախի հավաքականը: Իսկ շենգավիթցիները ստիպված էին բավարարվել 4-րդ տեղով: 5-րդ տեղը գրավեց ԽՄՕՄՄ-ի թիմը, իսկ աղյուսակը եզրափակեց Աջափնյակի թիմը, որը պարտվեց բոլոր 5 խաղերում էլ:**

**Մրցաշարի լավագույն խաղացող ճանաչվեց արցախցի Մարիամ Բաբայանը: Լավագույն ռմբարկուի համար սահմանված մրցանակին արժանացավ Շենգավիթի հավաքականի անդամ Շուշանիկ Եսայանը: 13-ամյա հանդբոլիստուհին մրցակիցների դարպասը 43 անգամ գրավեց: Պարգեւատրման արարողությունն իրականացրին Ստեփանակերտի քաղաքապետ, Արցախի հանդբոլի ֆեդերացիայի նախագահ Սուրեն Գրիգորյանը եւ Արցախի սպորտկոմիտեի նախագահ Ռազմիկ Հովակիմյանը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հակավիրուսային համակարգի արտոնագիր ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ հակավիրուսային համակարգի արտոնագրեր ձեռք բերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) **մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.**
2) **մասնագիտական փորձառություն.**
3) **տեխնիկական միջոցներ.**
4) **ֆինանսական միջոցներ.**
5) **աշխատանքային ռեսուրսներ:**

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. դեկտեմբերի 3-ի ժամը 16:00«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց, 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. դեկտեմբերի 3-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. դեկտեմբերի 09-ին ժամը16:00:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, 59-28-05, 59-28-02, ներքին՝ 18-05, 18-02:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

**Հասարակայնության հետ կապված ծառայություն**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տեղեկատվական անվտանգության ծրագրա-ապարատային համակարգեր ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տեղեկատվական անվտանգության ծրագրա-ապարատային համակարգեր ձեռքբերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) **մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.**
2) **մասնագիտական փորձառություն.**
3) **տեխնիկական միջոցներ.**
4) **ֆինանսական միջոցներ.**
5) **աշխատանքային ռեսուրսներ:**

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. դեկտեմբերի 3-ի ժամը 16:00«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց, 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. դեկտեմբերի 3-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. դեկտեմբերի 9-ին ժամը 16:00:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, 59-28-05, 59-28-02, ներքին՝ 18-05, 18-02:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

**Հասարակայնության հետ կապված ծառայություն**

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

1. Տարածք, ընդ. մակերեսն է՝ 61.5 ք.մ.: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն համայնք, Աբովյան փողոց, շենք 16/3, թիվ 22 տարածք: Լոտի մեկնարկային գինը՝ 71500000 ՀՀ դրամ:

Գույքը գրավադրված է: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գնի 2%-ի չափով, որը պետք է վճարվի կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով՝ 11.11.2013թ-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը՝ 12.11.2013թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին հոլանդական եղանակով, յուրաքանչյուր փուլում մեկնարկային գնի իջեցումով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվան նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեներով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով:



**ԱՐԹ ԵՒ ԼԵԳԵՆԴ**

**հայկական ձեռագործներ եւ գեղանկարներ**

Ցուցասրահի բացումը տեղի կունենա հոկտեմբերի 27-ին:

Ցուցասրահը բաց է ամեն օր 10.30-19.00
Հանգստյան օրը՝ երկուշաբթի

*Երեւան, Մոսկովյան 24/4, հեռ.՝ +374 91 374073*




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 25.10.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: